ւորեցուցին զՄիխայէլ՝ որդի Տուկիծին. որ եկ բազում զօրօք 'ի Պարսս, և հասեալ 'ի Պարս, այրեաց զ՝այոց եկեղեցին, և երդուաւ՝ թէ՝ եթէ դարձայց 'ի պատերազմէն, ջնջեցիս զամենայն ՝այս, և տամ՝ զեկեղեցին՝ ՝ռոմոց. որ յաղթեցին և Պարսիկք և զինքն տարան գերի։

Միխայէլ թագաւորեաց ամս Ը։ Եւ եկ պատերազմել ընդ Տուժէնայ, և յաղթեաց նմա. և զօրացն կալեալ՝ ածուցին նմա քուրձ՝ և կուրացուցին զաչս նորա՝ փոխելով հրամանաւ Միխայէլ թագաւորին. և նա 'ի ցաւոյն մեռաւ. այս եղև Տուժէնի զինի ազատելոյն 'ի Պարսից. ոչ թէ՝ գերի փնացեալ էր՝ այլ լաւ էր, քան չարաչար մահն իւր պղծոյն Տուժէնի։ Իսկ Միխայէլ հրաժարեալ յաշխարհէ՝ գնաց 'ի վանս, և անդ կեցեալ մեռաւ բարեպէս։

Ալէքս թագաւորեաց ամս ԼԸ. և ամիսս Լ։ Եւ խաղաղացաւ աշխարհն՝

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան